

Հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ Փրիստիայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի տնօրեն,
Իրավաբանական գիտությունների թեկնածու



Լ.Ա. Ղազանյան

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Նազելի Գառնիկի Սուքիասյանի

«Ֆինանսական պատասխանատվության իրավական հիմնախնդիրները

Հայաստանի Հանրապետությունում» թեմայով

**ԺԲ. 00.02. «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական
գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար**

ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Նազելի Գառնիկի Սուքիասյանի ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական պատասխանատվության իրավական հիմնախնդիրների հետազոտությանը:

Գրախոսվող դոկտորական ատենախոսության թեման աչքի է ընկնում արդիականությամբ, քանի որ պետության ֆինանսական գործունեության ոլորտներում առկա են բազում հիմնախնդիրներ, մեր երկրում ֆինանսական պատասխանատվության ինստիտուտը դեռևս անարդյունավետ է գործում և չի համապատասխանում որակական չափանիշներին:

Նազելի Գառնիկի Սուքիասյանի դոկտորական ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք: Աշխատանքի համակարգային վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ որոշակիորեն հիմնավորված եզրահանգումներով ներկայացվում են հայաստանյան իրականությունում ֆինանսական պատասխանատվության ինստիտուտի որոշ հիմնահարցերի գործնական լուծումներ: Ատենախոսությունում ներկայացված դատողություններն ու եզրահանգումներն ունեն ճանաչողական և գիտական նշանակություն և կարող են օգտակար լինել առանձին հետազոտությունների և ուսումնասիրությունների համար:

Աշխատանքի շրջանակներում համալիր կերպով ներկայացվել են ֆինանսական պատասխանատվության հիմնախնդիրները, իրավական նախադրյալները և իրավական հիմքերի էվոլյուցիան, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական գործունեության մեջ ֆինանսահրավական հարկադրանքի էության և անհրաժեշտության առանձին հիմնահարցերի արդի զարգացումները, ֆինանսահրավական պատասխանատվության հետազոտման մեթոդաբանական հիմնախնդիրները և ֆինանսական պատասխանատվության առանձնահատկությունները ներկա ժամանակաշրջանում:

Դոկտորական ատենախոսական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նաև հետհեղափոխական շրջանում տնտեսվարող սուբյեկտների ֆինանսակա կարգապահության ամրապնդմամբ և բյուջետային եկամուտների նպատակասլաց օգտագործմամբ:

Աշխատանքում հեղինակը լիարժեքորեն օգտագործել է նորմատիվ նյութեր և տեսական-մասնագիտակն գրականություն, ինչի շնորհիվ ինչի շնորհիվ աշխատանքում ձևակերպված եզրահանգումները և գործական առաջարկությունները ներկայանում են գիտականորեն հիմնավորված և տրամաբանորեն փաստարկված: Այնուամենայնիվ, անհարաժեշտ ենք գտնում ներկայացնել որոշակի դիտողություններ և նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

1. Աշխատանքում գերակշռում է հիմնախնդրին առնչվող գաղափարների, օրենսդրական կարգավորումների ընդհանուր նկարագրությունը, դրանց պատմական էվոլյուցիայի ներկայացումը: Ավելին, կատարված եզրահանգումներն առավելապես առանձին օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկներ են, որոնց համար ամենևին էլ պետք չէր կատարել ատենախոսական հետազոտություն, հատկապես երբ դրանց մի մասը բազմիցս քննարկվել է: Բացի այդ, դրանք չունեն բավարար գիտական հիմնավորվածություն և նոր չեն գիտության տվյալ բնագավառում առկա այլ լուծումների համեմատությամբ: Ուստի, կարծում ենք, որ աշխատանքում կատարված եզրահանգումներն ու պաշտպանության ներկայացվող դրույթները

խոցելի են գիտականության չափանիշի տեսանկյունից և կարիք ունեն լրացուցիչ հիմնավորումների:

2. Պաշտպանության ներկայացվող 2-րդ կետի դրույթում հեղինակը որպես նորույթ դիտարկում է «առաջին անգամ բացահայտված ֆինանսաիրավական հարկադրանք» եզրույթը: Ավելին, որպես նորույթ դիտարկվում է «ֆինանսաիրավական հարկադրանքը ... որպես ... հարկադրանքի միջոցների ամբողջություն» և այլ ձևակերպումներ (էջ 12, 105), որոնք հանրաճանաչ են և առկա են գրեթե բոլոր դասագրքերում և մի շարք ատենախոսություններում:

3. Պաշտպանության 5-րդ կետով ներկայացված դրույթում հեղինակը որպես «հայեցակարգային նորույթ» է դիտարկում «ֆինանսաիրավական հարկադրանքը կարող է կիրառվել անկախ իրավահարաբերության մասնակիցների վարչական ենթակայությունից» դրույթը, որը արդեն իսկ հանրաճանաչ է, հաստատված դասակարգային նյութերում, դոկտորական ատենախոսությունների դրույթներում և մեր կարծիքով, չի կարող հավակնել հայեցակարգային նորույթի:

4. Պաշտպանության ներկայացված 9-րդ կետի դրույթում հեղինակը որպես հիմնավորում նշում է, որ «պետության ֆինանսական գործունեության ոլորտում երբեք փորձ չի կատարվել լուսաբանել պետական, առավել ևս ֆինանսական հարկադրանքը իրացնող մարմինների իրավատնօրինության հիմնահարցը», այնուհետև՝ որպես գիտական նորույթ է սահմանում է «ֆինանսական իրավատնօրինություն (юрисдикция)» հասկացությունը, որը բովանդակային և իրավական տեխնիկայի առումով ամբողջությամբ համընկնում է «վարչական իրավատնօրինությանն (юрисдикция)» հետ, պարզապես, վարչականը փոխարիվել է ֆինանսական եզրույթով:

5. Պաշտպանության 10-րդ կետով ներկայացված դրույթում որպես նորույթ, դիտարկել հարկադրանքի միջոցների դասակարգումը՝ ըստ կիրառման ոլորտների և ըստ իրականացվող հարկադրանքի բովանդակության, նույնպես խնդրահարույց է, քանի որ դասակարգումն ինքնին անհրաժեշտ է հիմնախնդիրների հետազոտության և վերլուծության համար, իսկ որպես գիտական նորույթ պետք է դիտարկվեր վերլուծության արդյունքներով կատարված եզրահանգումը: Կարծում ենք, որ նշված կետի դրույթը լրացուցիչ

հիմնավորման կարիք ունի, քանի որ գիտական նորույթ չի կարող հանդիսանալ իրավունքների սահմանափակման ուղղված հարկադրանքի միջոցների սահմանումը, ինչպիսիք են՝ անձին բերման ենթարկելը կամ անձի գննումը կամ քննումը, քանի որ դրանք առավելապես օրենսդրական կարգավորման խնդիրներ են, և ոչ թե տեսական վերլուծության արդյունք:

6. Հեղինակը պաշտպանության ներկայացված 11-րդ կետում նշում է, «...ներկայացված գիտական նորույթների զգալի մասը ուղղված է ՀՀ գործող ֆինանսական օրենսդրության բարեփոխումներին, որոնց մի մասը վաղեմության հիմքով և ժամանակի պահանջներին չհամապատասխանող իրավակարգավորումների բարոյական մաշվածության պատճառով վերանայման և լրամշակման կարիք ունի»: Նախ, անհրաժեշտ է ընդգծել, որ «իրավակարգավորումների բարոյական մաշվածություն» եզրույթի տակ ինչ է նկատի ունեցել հեղինակը: Այնուհետև, ներկայացված նորույթների շրջանակում ֆինանսական պատասխանատվությունը վարչական պատասխանատվությունից սահմանազատելու նպատակով և «կրկնակի իրավաբանական պատասխանատվությունը» բացառելու անհրաժեշտությունից ելնելով հեղինակը նաև առաջարկում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի մի շարք հոդվածներ, որոնք ուղղված են հարկային գործունեության համար պատասխանատվության սահմանմանը, ուժը կորցրած ճանաչել (15, 17-19): Հեղինակը որպես հիմնավորում վկայակոչում է Սահմանադրական դատարանի 2014 թվականի ՍԴՌ-1139 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները (էջ 164-167): Սակայն, անհրաժեշտ է նկատել, որ ՀՀ Սահմանադրական դատարանը հիշատակված որոշման մեջ անդրադարձել է միևնույն արարքի համար կրկնակի պատասխանատվության բացառմանը և «կրկնակի իրավական պատասխանատվության» մասին այդպես էլ խոսք չի գնում, հակառակ դեպքում վիճարկվող դրույթները կճանաչվեին ՀՀ Սահմանադրությանը հակասող: Ընդակառակը, ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «...օրենսդիրը, առաջնորդվելով իր հայեցողական լիազորություններով, տարանջատել է հարկային և վարչական պատասխանատվության բնագավառները՝ նկատի ունենալով հարկային հարաբերությունների կարգավորման սահմանադրա-

իրավական առանձնահատուկ կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ սահմանադրական կարգի ու օրինականության պահպանման համատեքստում: Այդ տարանջատումն ինքնին հետապնդում է իրավական որոշակի նպատակ և սահմանադրականության խնդիր չի հարուցում»:

7. Անհրաժեշտ է աշխատանքի շրջանակներում նշել, որ լրացուցիչ հիմնավորման կարիք ունի հեղինակի առանձին ձևակերպումները: Օրինակ՝ ատենախոսության առաջին գլխի «Պետության ֆինանսական գործունեությունը որպես պետական միասնական իշխանության իրականացման ձև» վերտառությամբ §1-ի թեման այդպես էլ չի համապատասխանում բովանդակության հետ: Մասնավորապես, թեմայի վերտառությունից հետևում է, որ հեղինակը պետության ֆինանսական գործունեությունը դիտարկում է պետական իշխանության իրականացման ձև, սակայն աշխատանքի բովանդակությունից բխում է, որ նա առավելապես իր մոտեցումները կառուցել է պետության գործունեության կազմակերպման վերաբերյալ առկա տեսական վերլուծությունների վրա: Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ հեղինակի կողմից առաջադրվել է հետազոտական խնդիր՝ բացահայտելու ՀՀ ֆինանսական գործունեությունը, որպես պետական միասնական իշխանության իրականացման ձև (էջ 8), ինչը ևս հաստատում է այդ մտահոգությունը: Կարծում ենք, որ նման խնդրի առաջադրումը ևս հստակեցման կարիք ունի, քանի որ հեղինակը պետության ֆինանսական գործունեությունը պետք է դիտարկեր որպես իրավական երևույթ, պետության գոյության նյութական հիմք և պետության գործունեության առանձնահատուկ տեսակ, բայց ոչ որպես իշխանության իրականացման ձև (էջ 23-34):

8. Ատենախոսության 1-ին գլխի 4-րդ ենթագլխում «օրինականության սկզբունքի» էությունը, կարծում ենք համաչափ չէ բացահայտված, այն ներկայացվել է բացառապես օրենքների և այլ իրավական ակտերի անշեղ կատարման տեսանկյունից, մինչդեռ օրինականության (մեր կարծիքով իրավաօրինականության) սկզբունքը իրավունքի ժամանակակից տեսության մեջ ձեռք է բերել որակապես նոր բովանդակություն. *իրավական օրենքների և իրավական ակտերի պահանջների*

հետևողական կատարում, այսինքն՝ շեշտադրումն «իրավականության» պահանջների կատարման մեջ է:

9. Ատենախոսական աշխատանքի 108-րդ էջում հեղինակը քննարկման է ներկայացնում «վարչական տույժ» և «ֆինանսական տույժ» հասկացության եզրույթը, որոնք մեր կարծիքով, առանցքային հիմնախնդիրներ են և անհրաժեշտ էր որպեսզի բացահայտվեր դրանց բովանդակային առանձնահատկությունները:

10. Ատենախոսության որոշ էջերում առկա են ոչ ճիշտ իրավական ձևակերպումներ և արտահայտություններ, օրինակ՝ «ուղղորդել դրանց իրավական կարգավորումը (էջ 363)», «սուբյեկտների որակական վիճակ (էջ 363) « կամ ոճային բացթողումներ (էջեր 80,238,289 և այլն):

Այնուամենայնիվ, վերը նշված դիտողություններն, ըստ էության, մասնակի բնույթ են կրում և բնավ չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսության դրույթները:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան, իսկ հեղինակի կողմից հրատարակած հոդվածներում և մենագիր աշխատությունում լիարժեքորեն արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Հետևաբար, Նազելի Գառնիկի Սուքիասյանի «Ֆինանսական պատասխանատվության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսական հետազոտությունը իրենից ներկայացնում է արդիական, տեսական և գործնական նշանակություն ունեցող ավարտուն, ինքնուրույն ուսումնասիրություն, որը ներառում է ֆինանսական, հարկային և բանկային իրավունքի տեսության, օրենսդրության, իրավակիրառական պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող իրավաբանական և ֆինանսական պատասխանատվության և վարույթի խնդիրների վերաբերյալ գիտական հիմնավորված լուծումներ: Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Նազելի Գառնիկի Սուքիասյանի ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում «գիտական աստիճանաշնորհման կանոնա-

կարգով» սահմանված պահանջներին, իսկ հեղինակը արժանի է ԺԲ.00.02.- «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի Պետաիրավական հետազոտությունների բաժնի 2020 թվականի հունիսի 21-ի նիստում, որին մասնակցել են բաժնի վարիչ ի.գ. դ., պրոֆեսոր Հ.Մ. Ստեփանյանը, ի.գ. դ., պրոֆեսոր Գ. Հ. Սաֆարյանը, իրավ. գիտ. թեկնածուներ Լ.Ա.Ղազանյանը, Բ.Վ. Ղազինյանը, Ա.Վ.Շուքուրյանը, Ա.Ա. Աբրահամյանը:

**ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի**

**Պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**

Հ. Մ. Ստեփանյան

